ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2019թ. N _____ -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 26/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐԸ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ. 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ.26/1 հասցեում գտնվող Հանրապետության նախագահի նստավայրը անվանակոչել «Հանրապետության տուն» անվանումով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 26/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐԸ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարի կողմից Երևանի քաղաքապետարան է ներկայացվել առաջարկություն Երևան քաղաքում Մարշալ Բաղրամյան պողոտայի հ. 26/1 հասցեում գտնվող Հանրապետության նախագահի նստավայրը՝ ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտը, «Հանրապետության տուն» անվանակոչելու վերաբերյալ:

Նշված գույքին Երևանի քաղաքապետի 08.04.2019թ. հ. 1071-Ա որոշմամբ տրամադրվել է՝ Մարշալ Բաղրամյան պողոտա, հ. 26/1 հասցեն:

Հանրապետության նախագահը և իր աշխատակազմը 2019 թվականի մարտի 1-ից Մաշտոցի պողոտայի հ. 47 հասցեից տեղափոխվել են վերոգրյալ հասցեում գտնվող նախագահական նստավայրի վարչական շենք: Շենքում աշխատասենյակ է նախատեսվել նաև ՀՀ վարչապետի համար, ինչպես նաև նրան ընձեռված է արարողակարգային նշանակության դահլիճներից օգտվելու հնարավորություն:

Հանրապետության նախագահի աշխատակազմը ծրագրում է Բաղրամյան պողոտայի հ. 26/1 հասցեում գտնվող վարչական շենքի դահլիճներում, ինչպես նաև հարակից տարածքում իրականացնել մշակույթային միջոցառումներ, այդ թվում՝ համերգներ, ցուցահանդեսներ, շնորհանդեսներ և այլն:

Հաշվի առնելով նախագահական նստավայրի նկատմամբ առկա ծրագրերը և նպատակները, ինչպես նաև անվանակոչման արդյունքում դրա նշանակության վերաիմաստավորումը՝ նպատակահարմար է գտնվել անվանակոչման հարցը ներկայացնել Երևան քաղաքի ավագանու քննարկմանը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի դրույթներով մշակվել է Երևան քաղաքի Մարշալ Բաղրամյան պողոտայի հ. 26/1 հասցեում գտնվող Հանրապետության նախագահի նստավայրը՝ «Հանրապետության տուն» անվանակոչելու վերաբերյալ ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 26/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐԸ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐԸ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևան քաղաքում Մաշալ Բաղրամյան պողոտայի h. 26/1 հասցեում գտնվող ՀՀ նախագահի նստավայրը «Հանրապետության տուն» անվանակոչելու մասին»» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՊՈՂՈՏԱՅԻ Հ. 26/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐԸ «ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՒՆ» ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ»» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՄՊԱՄՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևան քաղաքում Մաշալ Բաղրամյան պողոտայի h. 26/1 հասցեում գտնվող ՀՀ նախագահի նստավայրը «Հանրապետության տուն» անվանակոչելու մասին»» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ